ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՐՈՎ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՈՒՐԳԱՐՅԱՆ ԱԼԵՍԱ ՄԻՍԱԿԻ

ԱՌՅԱՆՑ ՀԱՐԹԱԿԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, **Իզաբելլա Գրավիկի Բաբայան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մանուկ Աշոտի Մկրտչյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լուսինե Մարտունիկի Պողոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Վ. Բրյուսովի անվան Պետական Համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ. դեկտեմբերի 4-ին ժամը 12:00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի <<Մանկավարժություն>> 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025թ.-ի նոյեմբերի 3-ին:

<<Մանկավարժություն>> 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ **Թերեզա Յուրիի Ազատյան**

Հետազոտության արդիականությունը: Արդի պայմաններում տեխնոլոգիական փոփոխությունների արդյունքում կրթական համակարգը արդիականացվում է, հատկապես ուսուցիչների վերապատրաստման ոլորտում, քանի որ ուսուցչի առջև դրված պահանջները շարունակաբար փոփոխվում են: Այսօր ուսուցիչը պետք է լինի համագործակցային, անընդհատ ինքնակրթվող, նորարարական մեթոդներին տիրապետող ու կիրառող անձ: Առաջնահերթ են դառնում ուսուցիչների վերապատրաստման գործընթացը ոչ միայն առերես, այլև առցանց կազմակերպումն ու իրականացումը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է ուսումնասիրել և՛ ՀՀ կրթական համակարգի, և՛ այլ երկրների վերապատրաստման դասընթացների կազմակերպման առանձնահատկությունները:

Կրթության ոլորտում վեր են հանվում ուսուցիչների հավատարմագրման և վերապատրաստման հարցերի վերաբերյալ բազմաթիվ պահանջներ ու խնդիրներ: Կրթական ոլորտի փոփոխությունները նախատեսում են ուսումնական պլանների վերանայում և տարբեր մեդիագործիքների կիրառություն, որոնք թույլ են տալիս օգտվել հեռավար հարթակներից, որտեղ ուսուցիչները ներգրավվում ու մասնակցում են տարբեր սեմինարների, վեբինարների և դասընթացների: Առցանց հարթակում իրականացվող մասնագիտական ու մանկավարժա-մեթոդաբանական վերապատրաստումների առավել արդյունավետ իրականացումն ու դրա նպատակահարմար կազմակերպումն կարևորվում է մասնավորապես նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Հայկական կրթական միջավայրում ուսուցիչների վերապատրաստումները ներկայացվում են որպես մասնագիտական զարգացման հիմնական բաղադրիչներից մեկը, որի պատասխանատվությունը կրում են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, նախարարության կողմից վերապատրաստման համար երաշխավորված կազմակերպությունները, ԿԶՆԱԿԸ:

Ուսուցիչների վերապատրաստման հիմնախնդրին իրենց աշխատություններում անդրադարձել են գիտության տարբեր ոլորտների (մանկավարժություն, հոգեբանություն, սոցիոլոգիա, փիլիսոփայություն) հայ և միջազգային տարբեր գործիչներ (Ս. Խաչատրյան, Կ. Վարդանյան, Ա. Մանուկյան, З. Малькова, А. Барбарига, М. Андреев, M. Hammersley, P. Robinson

և այլք): Սակայն մեր գիտական ուսումնասիրության շրջանակը ներառում է հայկական իրականության մեջ հայ ուսուցիչների վերապատրաստման արդյունավետության ուսումնասիրումը առցանց հարթակում, ինչը մինչ այժմ գիտականորեն լիովին ուսումնասիրված չէ: Կրթական համակարգում ուսուցիչների վերապատրաստման գործընթացը առցանց հարթակում հանդիպում է դժվարությունների. այդ գործընթացի կազմակերպումը ենթադրում է մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են դասընթացի նպատակային ու արդյունավետ անցկացումը: Հաշվի առնելով մանկավարժական մի շարք գործոններ ու պայմաններ՝ անհրաժեշտություն է առաջանում ուսուցիչների մասնագիտական ու մանկավարժական վերապատրաստման գործընթացն առցանց հարթակում իրականացնել հատուկ մշակված ու կազմակերպված միջոցներով:

Հետազոտության նպատակը *ուսուցիչների առցանց վերապատրաստման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մոդուլային ծրագրի մշակումն ու դրա իրականացման մոդելի ստեղծումն է:*

Հետազոտության օբյեկտն ուսուցիչների առցանց վերապատրաստումների գործընթացն է:

Հետազոտության առարկան ուսուցիչների առցանց վերապատրաստման համակարգն է ՀՀ-ում և արտերկրում:

Հետազոտության գիտական վարկածի համաձայն՝ ուսուցիչների առցանց վերապատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացումը հնարավոր է ապահովել, եթե

ա. Ուսումնասիրվեն ուսուցիչների առցանց վերապատրաստումների վերաբերյալ առկա հայեցակարգային մոտեցումները:

բ. Բացահայտվեն և համակարգվեն ուսուցիչների առցանց վերապատրաստումների կազմակերպման սկզբունքներն ու առանձնահատկությունները,

գ. Մշակվեն և ներդրվեն ուսուցիչների առցանց վերապատրաստման ՏՀՏ գործիքների մանկավարժականացման ծրագիր, առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստումների իրականացման մանկավարժական մոդել, մշակվի և մոդելավորվի առցանց վերապատրաստման շարունակականությունն ապահովող մեխանիզմ:

Հետազոտության խնդիրները՝

1. ուսումնասիրել հիմնախնդրին վերաբերող մասնագիտական, մանկավարժական և մեթոդական գրականություն,
2. ուսումնասիրել ուսուցիչների առցանց վերապատրաստման գործընթացի առկա վիճակն ու հնարավոր զարգացման միտումները,
3. համաշխարհային փորձի ուսումնասիրման և համեմատական վերլուծության հիման վրա բնութագրել հայ և միջազգային հարթակներում ուսուցիչների վերապատրաստման ընթացակարգերը, նկարագրել օրենսդրական դաշտի առանձնահատկությունները, դրանցում կատարված փոփոխությունները,
4. իրականացված հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա մշակել ՏՀՏ գործիքներով հագեցած մոդուլային ծրագիր ուսուցիչների առցանց վերապատրաստման շարունակականությունն ապահովող մեխանիզմներ:
5. Մշակել «Առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման մանկավարժական մոդել»

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում՝

- ուսուցիչների վերապատրաստման վերաբերյալ տեսությունները (Ի. Սվիրինա, Յու. Ալֆերով, Ի. Կուրդյումով, Լ. Պիսարև),
- հիմնախնդրի վերաբերյալ տարբեր երկրներում ուսուցիչների վերապատրաստումների մասին գիտամեթոդաբանական ուսումնասիրությունները (Դ. Քոլերիջ, Ջ. Շաթլվորթ),
- ուսուցիչների վերապատրաստումների մասին առավել տարածված մանկավարժական տեսակետները (Կ.Ուշինսկի, Լ. Մոձալևսկի, Պ. Կապտերև, Գ. Պանաչինա, Ի. Սոլովկով, Է. Նիկիտին և ուրիշներ),
- հոգեբանների և ուսուցիչների համար կազմակերպված թերապիայի և խորհրդատվության մոտեցման ուսումնասիրումը (Կ. Ռոջերս), ուսուցիչների նորմատիվային և նկարագրական մոդելները (Գ. Սիմոն),
- ինքնակրթության ու շարունակական կրթության մասին տեսությունների մասին կատարված փորձի ուսումնասիրումը (Մ. Գրոմկովա, Մ. Աստվածատրյան), ՅՈՒՆԵՍԿՈ-ի, Բոլոնիայի համակարգերի ներդրումը,
- ՀՀ ուսուցիչների վերապատրաստման մասին կրթական նորմատիվային ակտերն ու օրենքները, ուսուցիչների կամավոր ու

պարտադիր ատեստավորման մասին օրենսդրական փոփոխություններն ու որոշումները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության նպատակով, առաջ քաշված խնդիրներով և գիտական վարկածով պայմանավորված՝ հետազոտության ժամանակ կիրառվել են

1. տեսական հետազոտությանը վերաբերող մանկավարժա-հոգեբանական, մեթոդաբանական գրականության վերլուծություն, հիմնախնդրի վերաբերյալ նորմատիվ ու իրավական ակտերի և օրենքների ուսումնասիրում, առցանց ու առերես ուսուցման ու վերապատրաստման վերաբերյալ գրականության, հոդվածների ու ատենախոսությունների ուսումնասիրում ու վերլուծություն,
2. էմպիրիկ մեթոդներ (դիագնոստիկ հարցաթերթիկներ, դիտում ու զրույց) և մոդելավորում,
3. վիճակագրական՝ փորձարարական հետազոտության ժամանակ ստացված արդյունքների վերլուծություն, դրանց սահմանում ու մշակում ըստ քանակական ու որակական ցուցանիշների, արդյունքների տրամագրային պատկերում,

Հետազոտության հիմնական փուլերը: Հետազոտությունն իրականացվել է 3 փուլով:

- Առաջին փուլում (2019-2020) ուսումնասիրվել և քննարկվել են հիմնահարցի վերաբերյալ առկա տեսամեթոդաբանական գրականությունը, տարբեր հոդվածներ, ատենախոսություններ: Այս փուլում հստակեցրել ենք հիմնահարցի ուսումնասիրմանն ուղղված նպատակը, թեմայի արդիականությունը, խնդիրները, մեթոդներն ու ուսումնասիրություններ իրականացնելու տեխնոլոգիաները, ինչպես նաև օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության խնդիրները:
- Երկրորդ փուլում (2021-2022) տարբեր դպրոցներում ու կրթական այլ օղակներում հայկական և միջազգային հարթակներում իրականացրել ենք հարցումներ, որպես վերապատրաստող ու վերապատրաստվող մասնակցել ենք հայ և օտարերկրյա տարբեր վերապատրաստումների՝ առցանց հարթակն առավել հանգամանալից ուսումնասիրելու, դրանում առկա խնդիրները վեր հանելու նպատակադրմամբ: Միաժամանակ, իրականացրել ենք վերապատրաստման մոդուլային ծրագիր՝ առցանց հարթակում այդ մոդելի նախատիպը ներկայացնելու համար:

- Երրորդ փուլում (2023-2025) ամփոփել ենք ուսուցիչների ՝ առցանց հարթակում վերապատրաստումներ անցկացնելուն ուղղված մեր ուսումնասիրությունները, կատարվել են այդ արդյունքների վերլուծություններ, ու ներկայացվել են նախնական եզրահանգումներ, մշակվել է մանկավարժական մոդել առցանց հարթակում վերապատրաստումները առավել արդյունավետ անցկացնելու համար:

Հետազոտության գիտական նորույթը:

- Մշակվել է մեծահասակների ուսումնառության և վերապատրաստման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ հեղինակային ծրագիրը:
- Մշակվել ու նախագծվել են առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման գործընթացի մանկավարժական մոդելը, որը ներառում է.

ա.Ուսուցիչների առցանց վերապատրաստման նպատակն ու առանձնահատկությունները, դրանց իրականացման սկզբունքներն ու մանկավարժական պայմանները,

բ. Առցանց վերապատրաստման գործընթացի ռեսուրսներն ու փուլերը, յուրաքանչյուր փուլի իրականացման քայլերը;

գ.Առցանց վերապատրաստման գործընթացի ամփոփման, գնահատման, հետադարձ կապի և վերապատրաստման շարունակականությունն ապահովող մեխանիզմները, որոնք ընդլայնում են վերապատաստվողի ինքնուրույնությունը, ստեղծագործականությունն ու նախաձեռնողականությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Մոդուլային ծրագիրը, դրա իրականացման և վերապատրաստումների շարունակականությունն ապահովող մանկավարժական մոդելը կհարստացնեն ուսուցիչների առցանց վերապատրաստման գործընթացների տեսությունը: Հայ և միջազգային հարթակներում ուսուցիչների վերապատրաստման ընթացակարգերի ուսումնասիրման արդյունքները, առաջ քաշված առանցքային դիրքորոշումներն ու տեսակետերը կօգնեն այդ ոլորտի հետազոտողներին տեսական դրույթներ ձևակերպելիս:

Հետազոտության գործնական նշանակությունը: Մեր հետազոտության արդյունքները, դրանց հիման վրա մշակված «Առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը ու դրա

իրականացման մանկավարժական մոդելը, որը կապահովի առցանց վերապատրաստումների հետադարձ կապը և դրանց շարունակականությունը, կարող են կիրառվել վերապատրաստող տարբեր կազմակերպությունների, կարճատև դասընթացներ իրականացնող առարկայական մասնախմբերի, կրթական կազմակերպությունների, մանկավարժական հաստատությունների, տարբեր կրթօջախների վերապատրաստման դասընթացներ իրականացնողների կողմից:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

- ՀՀ ուսուցիչների վերապատրաստման գործընթացի առկա վիճակի ու զարգացման միտումների վերլուծությունը թելադրում է առցանց հարթակում վերապատրաստումների իրականացման մանկավարժական նոր մոդելի մշակում:
- Առցանց վերապատրաստման ՏՀՏ գործիքներով հագեցած նոր մոդուլային ծրագրի ստեղծումը պայմանավորված է մեդիագործիքների լայն կիրառությամբ ու կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխություններով, ուսուցիչների կամավոր ու պարտադիր ատեստավորման մեջ կատարված փոփոխություններով, այդ գործընթացն առավել հաճախ առցանց հարթակում կիրառելու հավանականության բարձրացմամբ, գիտության ոլորտում նոր առաջընթացով և ուսուցիչների վերապատրաստումներն առցանց հարթակում իրականացնելու հրամայական պահանջով:
- «Առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման մանկավարժական մոդելը» կարող է նպաստել վերապատրաստումների արդյունավետ իրականացմանը, տարբեր երկրների ուսուցիչների միջև միջկրթական կապեր ստեղծելուն, դասավանդման առաջավոր փորձին ծանոթանալուն:
- Ուսուցիչների վերապատրաստման առցանց հարթակի առանձնահատկությունների հաշվառումը հնարավորություն է տալիս ընդլայնելու մասնակիցների թիվը, օգնում է դրա ավելի մոբիլ և համագործակցային դառնալուն, առաջնային խնդիր է դարձնում ուսուցիչների մասնագիտական աճի պահանջմունքը՝ նպաստելով շարունակական կրթությանը:
- Տեխնոլոգիաներով հագեցած մոդուլային ծրագիրը և դրա իրականացման գործողությունների մոդելը նպաստում են առցանց վերապատրաստումների որակի բարձրացմանը, վերապատրաստվողների

ինքնուրույնության, ստեղծագործականության ու նախաձեռնողականության զարգացմանը, ապահովում են վերապատրաստումների շարունակականությունը, հետադարձ կապը, հնարավորություն են տալիս վերապատրաստվողներին ռեֆլեքսիայի ենթարկել իրենց գործունեությունը:

Հետազոտության բազան: *Հետազոտությունն իրականացվել է* Հրազդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11, Հ. Թումանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցներում, Հ. Օրբելու անվան ավագ դպրոցում և մի շարք օտարերկրյա դպրոցների ուսուցիչների շրջանում առցանց տարբերակով (Հարավային Կորեա, Ինդոնեզիա, Հնդկաստան): Ուսումնասիրությունների և կատարված աշխատանքների մասին զեկուցվել է ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի նիստերում, հայ և միջազգային տարբեր համաժողովներում, առցանց քննարկումներում, սեմինարներում, տպագրված հոդվածներում հայկական ու օտարերկրյա մի շարք ամսագրերում:

Հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունը մանկավարժական գործընթացում ու հանրակրթության ոլորտում հիմնախնդրի լիարժեք ուսումնասիրումն ու մասնագիտական որակավորման գործընթացի բավարար մշակումն են: Իրականացված տեսամեթոդաբանական հետազոտություններն ու դրանց արդյունքների վերլուծությունը հավաստում են արդյունքների ճշգրտությունն ու դրանց հիման վրա ստեղծված մոդելի արդյունավետ կիրառումը:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը*:* Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, 4 աղյուսակից, 11 տրամագրից և 12 գծապատկերներից հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 126էջ :

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության աշխատանքի նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, առաջադրված է գիտական վարկածը, ներկայացված են տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, սահմանված են պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության իրականացման փուլերը, ներկայացվել է աշխատանքի ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «**Ուսուցիչների վերապատրաստումների տեսամեթոդաբանական վերլուծությունը**» խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «**Վերապատրաստումների ընդհանուր բնութագիրն ու դրանց վերաբերյալ գիտական մոտեցումները»** ենթագլխում նշվում է, որ վերապատրաստված ուսուցիչները ձեռք են բերում մասնագիտական ու մեթոդական գիտելիքներ ու հմտություններ, տիրապետում մեդիագործիքներին ու նոր չափորոշիչներով դասը պլանավորելու և իրականացնելու ձևերին, միաժամանակ վերանայվում են կրթական ծրագրերը, տարբեր մեդիագործիքների ներմուծման հնարավորությունները, որոնք թույլ են տալիս վերապատրաստումներն իրականացնել ոչ միայն առերես, այլ նաև հեռավար ձևաչափերով:

Երկրորդ՝ **«Ուսուցիչների վերապատրաստման հիմնախնդրի օրենսդրական կարգավորումներն ու դրանց բնութագիրը» ենթագլխում** բնութագրված են ուսուցիչների վերապատրաստման իրականացման օրենսդրական կագավորման առանձնահատկություններն ու դրանցում կատարված փոփոխությունները: Կրթական յուրաքանչյուր բարեփոխման կազմակերպումն ու իրականացումը տարբերվում է. հաշվի են առնվում տվյալ երկրի կրթական որակն ու կրթական համակարգի զարգացման միտումները: Շեշտվում է, որ ելնելով կրթական բարեփոխումներից և առաջ քաշվող խնդիրներից՝ փոփոխվում են նաև այդ կարգավորումները: Միաժամանակ առկա ու հեռավար եղանակներով իրականացվող վերապատրաստումների ծրագրերը մշակվում են երաշխավորված կազմակերպությունների կողմից:

Երրորդ՝ **«Ուսուցիչների վերապատրաստումների տեսակները»** ենթագլխում բնութագրված են առցանց հարթակներում իրականացված վերապատրաստումների տարբեր տեսակները (համաժամանակյա,

տարաժամանկյա, հիբրիդային) բովանդակությունն ու դրանց առանձնահատկությունները, դրանց ձևաչափը: Արձանագրվում է, որ այսօր մեդիա դաշտում առկա են առցանց տարբեր ծրագրեր ու գործիքներ՝ ուսուցումն ավելի արդյունավետ իրականացնելու համար: Ուսուցիչներին հնարավորություն է տրվել մասնակցելու տարբեր երկրների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, ստանալու նոր գիտելիքներ ու հմտություններ, կիսվելու սեփական փորձով, հեռավար իրականացնելու դասերը:

Երկրորդ՝ **«Ուսուցիչների վերապատրաստումները հայ և միջազգային առցանց հարթակներում»** գլուխը բաղկացած է 3 ենթագլխից: Առաջին՝ **«Ուսուցիչների առցանց վերապատրաստումների էությունը, սկզբունքներն ու առանձնահատկությունները»** խորագրով ենթագլխում ներկայացված են առցանց հարթակում իրականացվող վերապատրաստումների առանձնահատկությունները, դրանց կառուցվածքն ու բովանդակությունը: Նշվում է, որ ուսուցիչների վերապատրաստման առցանց դասընթացները կարող են ընդգրկել ուսումնասիրվող թեմաների լայն շրջանակ, ներառյալ դասարանի կառավարումը, դասերի պլանավորումը, գնահատումը, հատուկ կրթությունը, տեխնոլոգիաների ինտեգրումը և այլն: Ե**րկրորդ՝ «Հայկական կրթական միջավայրում իրականացվող առցանց վերապատրաստումները» ենթագլխում** ներկայացված են հայ իրականության մեջ առցանց հարթակի կիրառմամբ ուսուցիչների վերապատրաստումների հատկանիշները, տրվել են դրանց համառոտ բնութագրումները: Երրորդ՝ **«Առցանց վերապատրաստումների իրականացումը միջազգային կրթական հարթակներում»** ենթագլխում, ներկայացված են միջազգային տարբեր առցանց հարթակներում տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ուսուցիչների առցանց վերապատրաստումների առանձնահատկությունները, դրանց հիմնական կառուցվածքն ու բնորոշ գծերը: Նշվում է, որ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող առցանց վերապատրաստումներն ունեն՝ դասընթացի անվանում առցանց հարթակում, նախատեսված թիրախային խումբ, բովանդակություն, կառուցվածք՝ առցանց տվյալ հարթակի թվային տեխնոլոգիաների համապատասխան, գնահատում առցանց գնահատման գործիքներով, համաժամանակյա ու տարաժամանակյա ժամանակացույց, արդիականություն ու նպատակահարմարություն, դասընթացին գրանցվելու կարգ ու պայմաններ:

Երրորդ գլուխը՝ **«ՈՒսուցիչների առցանց վերապատրաստման զարգացման միտումները»** բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Ուսուցիչների**

առցանց վերապատրաստման արդի վիճակը» ենթագլխում ներկայացված են հետազոտության կազմակերպման ու իրականացման գործընթացն ու դրա արդյունքների վերլուծությունը, որոնք ներկայացված են աղյուսակների ու տրամագրերի ձևով: Հետազոտությանը մասնակցել են հայ և միջազգային տարբեր կրթական հաստատությունների ուսուցիչներ: Վերլուծվել են հետազոտության ընթացքում ձեռք բերված տվյալները, որոնք վերաբերում են առցանց վերապատրաստումների տևողությանը, կառուցվածքային տարրերին, տեսակներին, հաճախականության ցուցանիշներին տարբեր ժամանակահատվածներում, ինչպես նաև ներկայացվել են առցանց վերապատրաստումների առավելություններն ու թերությունները: Երկրորդ ենթագլխում՝ **«Ուսուցիչների առցանց վերապատրաստման ծրագիր ՏՀՏ գործիքների մանկավարժականացման ուղղությամբ»** խորագրով ներկայացված է առցանց հարթակում համապատասխան տեխնոլոգիաների կիրառմամբ մեծահասակների ուսումնառության ծրագիր, որն իր մեջ ներառում է 5 մոդուլ նախատեսված է իրականացնել առցանց հարթակում տասշաբաթյա ժամանակահատվածում համաժամանակյա ու տարաժամանակյա ձևաչափով: Միաժամանակ յուրաքանչյուր մոդուլի վերջում կազմակերպվելու են առցանց հանդիպումներ ու քննարկումներ, համապատասխան առաջադրանքներով ու թեստերով: Ծրագիրը յուրաքանչյուր մոդուլի համար սահմանում է հստակ ժամանակահատված: Ծրագրի յուրաքանչյուր մոդուլ իր մեջ պարունակում է անհրաժեշտ տեսական նյութեր, մեթոդներ, տեխնոլոգիաներ, գործնական առաջադրանքներ: Բացի այդ՝ այն ներառում է նաև յուրաքանչյուր շաբաթվա համար անհրաժեշտ քննարկման նյութն ու առաջադրանքները, որոնք նարառված են տեսագործնական մոդուլներում:

Երրորդ ենթագլխում՝ **«Առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման առաջարկվող հեղինակային մանկավարժական մոդելի կառուցվածքն ու բնութագիրը»**, ներկայացված է <<Ուսուցիչների առցանց վերապատրաստումների մանկավարժական մոդելը>>: Նշվում է, որ առցանց հարթակում իրականացվող մոդելի արդյունավետության ու դրա առանձնահատկությունների որոշման համար ուսումնասիրվել են վերապատրաստումների առավելություններն ու թերությունները: Մոդելի պլանավորման ու դրա իրականացման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝ ուսուցչի ընդհանուր և մասնագիտական անընդհատ զարգացման, անհատական-ստեղծագործական, մասնագիտական

փոխազդեցության ու հաղորդակցման, համագործակցության, տեղեկատվական տեխնոլոգիական պատրաստվածության ապահովման:

Տրամագիր 1 Առցանց վերապատրաստումների առավելություններն ու թերությունները





Մոդելը բաղկացած է 5 հիմնական մասից՝ համապատասխան ենթաբաժիններով: Մոդելի իրականացման հիմքում ընկած են տեսական ու գործնական գիտելիքների համադրությունն ու յուրացումը, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման միջոցով վերապատրաստման գործընթացում ձեռք բերված գիտելիքների ամփոփումն ու գնահատումը: Վերջինս իրականանում է ինքնագնահատման, ռեֆլեքսիայի և կանխատեսման գործիքների միջոցով: Մոդելի յուրաքանչյուր բաղադրիչ ունի իր նպատակները, իրականացման փուլերն ու քայլերը, վերջնարդյունքները: Բոլոր բաղադրիչները փոխկապակցված են ու ապահովում են մանկավարժական վերապատրաստման ողջ գործընթացը առցանց հարթակում: Վերապատրաստման գործընթացի յուրաքանչյուր նախորդ փուլ փոխկապակցված է հաջորդ փուլի հետ ու տանում է դեպի մասնագիտական կատարելագործման ու աճի:

Վերապատրաստման գործընթացը ենթադրում է շարունակական կրթություն, որի ժամանակ իրականացվող բոլոր քայլերն ուղղված են մասնագիտական աճին: Որպես մոդելի արդյունավետ իրականացման մանկավարժական պայմաններ են առանձնացվել՝

- համապատասխան դրական միջավայրի ու բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը առցանց հարթակում, ռեֆլեքսիվ, մասնակցային, համագործակցող անձի առկայությունը, վերապատրաստման շարունակականության ապահովումը, ինքնուրույնության, ստեղծագործականության, նախաձեռնողականության համար պայմանների ստեղծումը վերապատրաստողի և վերապապատրաստվողի գիտակցականության, վերապատրաստման կարևորության գիտակցության առկայություն, ինչպես վերապատրաստողի, այնպես էլ վերապատրաստվողի կողմից:
- տեղեկատվական-տեխնոլոգիական անհրաժեշտ գործիքների ճիշտ ընտրությունն ու դրանց յուրացումը,
- հաղորդակցման միջավայրի ու պայմանների ապահովումը:
- ռեֆլեսիա, առաջնորդական կարողություններ, նոր նպատակների ձևակերպում և քայլաշարի կանխատեսումիրականացնելու համար բարենպաստ մթնոլորտի ստեղծում:

Գծապատկեր 1 Ուսուցիչների առցանց վերապատրաստման մոդել



Մոդելի նպատակներն են՝

- առցանց վերապատրաստման նախագծումն ու արդյունավետ պլանավորումը,
- առավել մատչելի ու արդյունավետ եղանակով վերապատրաստումների իրականացումը,
- նորագույն տեխնոլոգիաների ընտրությունն ու դրանց ուղղորդված կիրառումն ուսուցիչների առցանց վերապատրաստումների ժամանակ:

Մոդելի կիրառումից հետո ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

- վերապատրաստման իրականացման համար հաջողված առցանց համակարգի ստեղծում,
- վերապատրաստման գործընթացին առավելագույն հասանելիություն,
- առցանց վերապատրաստումների ճիշտ ու արդյունավետ պլանավորում ու իրականացում,
- տեխնոլոգիական համապատասխան գործիքների ու մեթոդների ճիշտ զուգակցում ու կիրառում,
- մասնագիտական նորարարական մեթոդներին առնչություն,
- ավելի փորձառու, նորագույն մեթոդներին ու տեխնոլոգիաներին տիրապետող, կոմպետենտ մասնագետների պատրաստում:

Եզրակացություններ

Ուսուցիչների առցանց վերապատրաստումների հիմանխնդրի շուրջ տեսա-մեթոդաբանական գրականության, օրենսդրական և ենթաօրենսդրական փաստաթղթերի և տարբեր երկրների ուսուցիչների վերապատրաստումների փորձի ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ՝

1. Ուսուցիչների առցանց վերապատրաստման գործընթացի արդի վիճակը և զարգացման միտումները համապատասխանում են միջազգային հարթակներում իրականացվող գործընթացներին, մասնավորապես ՀՀ-ում նույնպես աճել է ուսուցիչների առցանց վերապատրաստումների նկատմամբ հետաքրքությունն ու պահանջարկը:
2. Իրականացված հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա մեր կողմից մշակված ՏՀՏ գործիքներով հագեցած ուսուցիչների վերապատրաստման մոդուլային ծրագիրը և «Առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման մանկավարժական մոդելը» նպաստում են ՏՀՏ մանկավարժականացմանը, ուսուցիչների առցանց վերապատրաստման շարունակականության ապահովմանն ու ուսուցիչների անձնային ու սոցիալական որակների, մասնագիտական կոմպետենցիաների, նրանց ինքնուրույնության, ստեղծագործականության, նախաձեռնողականության զարգացմանը:
3. ՀՀ և տարբեր երկրների առցանց ուսուցիչների վերապատրաստումների առանձնահատկությունների և բովանդակության ուսումնասիրումը թույլ է տալիս մշակել նոր ռազմավարություններ առցանց վերապատրաստումների բովանդակության ու ՏՀՏ մանկավարժականացման ուղղությամբ: Մեր կողմից մշակված «Առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման մանկավարժական մոդելը» նպաստում է մոդուլային ծրագրի կիրառմանը, որը թույլ է տալիս հետադարձ կապ իրականացնել և ռեֆլեքսիայի ենթարկել հետուսուցման գործընթացը, կանխատեսել վերապատրաստում անցած ուսուցիչների զարգացումն ապահովող հետագա քայլերը՝ դրանով իսկ ապահովելով վերապատրաստման շարունակականությունը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ատենախոսի հետևյալ հրապարակումներում.

1. Բաբայան Ի.Գ., Դուրգարյան Ա.Մ. Ուսուցիչների առցանց վերապատրաստումները որպես մեդիակրթության բաղադրիչ, էջ 150-155 (Թոփուզյան Ա.Օ., Գյուլամիրյան Ջ.Հ., Պողոսյան Լ.Մ., Ասատրյան Ս. Մ. «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., 2020, էջ 150-155
2. Դուրգարյան Ա.Մ. Թվային մեդիա գործիքների դերը առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի բարելավման գործում, Հայագիտական հանդես Vol.2, N 69/2025/, էջ 348-361
3. Durgaryan A.M. "Modern Issues of Teacher Training on the Virtual platform", META Magazine for English teachers, June-2020, p. 6-10
4. Babayan I.G., Durgaryan A.M. ''The Main Pecularities of teacher Trainings in Armenia during COVID-19", Journal ''Инновационно-Технологическое Развитие Науки и Образованич в XXI веке'', 2020 Июль31, стр. 63-69
5. Babayan I., Aghuzumtsyan G., Durgaryan A. ''Effectiveness of Online Teacher training in media education'', Journal ''Main Issues of pedagogy and psychology'', vol. No. 2 (2021), p. 95-100
6. Babayan I.G., Durgaryan A.M. "The Features for planning an Effective teacher training on the Virtual platform", Journal '''International Journal of Innovative Technologies in social science'', 2022 March 14, p. 1-4
7. Durgaryan A.M. "The problem of Online Teacher training in the Curriculum of teacher Professional Development", Journal of Positive School psychology, 2022, Vol. 6 N 3, p. 3129-3133
8. Durgaryan A.M. '' Virtual Platform as an Effective means of Teacher Training Process'', Tuijim Jishu/Journal of Propulsion Technology, ISSN:1001-4055, Vol. 45 No. 2 (2024), p. 938-943
9. Topuzyan A.O., Durgaryan A.M. "The pedagogical Model of teacher training as an effective means of Online Teacher training", International Journal of innovative Technologies in Social Science, 4(44), e-ISSN:2544-9435, p. 1-5

ДУРГАРЯН АЛЕСА МИСАКОВНА

ОНЛАЙН-ПЛАТФОРМА КАК ЭФФЕКТИВНОЕ СРЕДСТВО ПРОЦЕССА ПЕРЕПОДГОТОВКИ УЧИТЕЛЕЙ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 «Теория и история педагогики».

Защита диссертации состоится в 4 декабря 2025г., в 12.00ч., на заседании специализированного совета <<Педагогика>> 020 КВОН РА при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна. Адрес: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца, 17

РЕЗЮМЕ

Актуальность исследования: В современных условиях технологических изменений и педагогического образования происходит модернизация системы образования, особенно в сфере подготовки учителей, поскольку требования к учителям постоянно меняются. Сегодня учитель должен быть коммуникабельным, постоянно самообразовываться, уметь осваивать и применять инновационные методы. Изменения в образовательной сфере предусматривают пересмотр учебных программ и использование различных медиа-инструментов, что позволяет использовать удаленные платформы, где учителя вовлекаются и участвуют в различных семинарах, вебинарах и курсах. Онлайн-платформа стремительно стабилизирует свои позиции в сфере образования, фиксируя новые успехи. Для онлайн-обучения необходимо умение использовать медиа-инструменты. Эффективность онлайн-обучения преподавателей определяется рядом факторов как личная заинтересованность, внедрение теоретических подходов, практика, позволяющая применять теоретические знания на практике.

В настоящее время в педагогике происходит процесс разрушения сложившихся стереотипов и формирования новой парадигмы образования. В связи с этим возникает необходимость в новой образовательной системе, которая будет готовить учителей, успешных в школе и соответствующих установленным образовательным стандартам. Международный опыт показывает, что для достижения успеха в сфере образования важно иметь качественный преподавательский состав и содержание, отвечающее требованиям времени и стимулирующее желание учащихся учиться. В армянской образовательной среде

подготовка учителей представлена как один из основных компонентов профессионального развития, за который отвечают Министерство образования, науки и культуры и спорта Республики Армения, организации, рекомендованные Министерством для подготовки кадров, и Национальный центр развития образования и инновации (НЦРОИ).

Вопросы подготовки учителей затрагивали в своих работах армянские и зарубежные деятели из разных областей науки (психология, педагогика, социология, философия) (С. Хачатрян, К. Варданян, А. Манукян, З. Малкова, А. Барбарига, М. Андреев, М. Хаммерсли, П. Робинсон и др.). Однако в сферу нашего научного исследования входит изучение эффективности подготовки армянских учителей в армянской действительности на онлайн-платформе, которая до сих пор научно не изучена в полной мере. Процесс подготовки учителей в образовательной системе на онлайн-платформе сталкивается с трудностями: организация этого процесса сопряжена с рядом проблем, которые препятствуют целенаправленному и эффективному проведению курса. Учитывая ряд педагогических факторов и условий, необходимо реализовать процесс профессионально-педагогической подготовки учителей на онлайн-платформе с использованием специально разработанных и организованных средств.

Целью исследования является разработка модульной программы с использованием современных технологий для онлайн-подготовки учителей и создание модели ее реализации.

Задачи исследования

1. изучить профессиональную, педагогическую и методическую литературу по данной теме,
2. изучить современное состояние процесса онлайн-обучения учителей и возможные тенденции развития,
3. охарактеризовать процедуры обучения учителей на армянских и международных платформах на основе изучения и сравнительного анализа мирового опыта, описать особенности законодательного поля, внесенные в них изменения,
4. разработать модульную программу, оснащенную средствами и механизмами ИКТ для обеспечения непрерывности онлайн-обучения учителей на основе анализа результатов проведенного исследования.
5. Разработать «Педагогическую модель онлайн-обучения учителей».

Теоретическая значимость исследования. Модульная программа, модель, обеспечивающая ее реализацию и непрерывность, обогатят теорию процессов онлайн-обучения учителей. В то же время были рассмотрены основные вопросы, идеи, ключевые позиции и точки зрения, касающиеся армянской и международной педагогической психологической литературы, которые имеют теоретическую значимость для лиц, ведущих исследования в этой области. Разработана модель, которая позволит повысить эффективность процесса онлайн-обучения и обеспечить непрерывность онлайн-обучения.

Практическая значимость исследования. Результаты проведённого исследования, а также разработанные на их основе <<*Программа использования современных технологий для организации обучения взрослых*>> и <<Педагогическая Модель Подготовки учителей на онлайн платформе>>, их реализации могут быть использованы образовательными организациями различного типа, реализующими программы повышения квалификации и краткосрочные курсы. Представленные материалы также могут быть полезны предметным методическим объединениям, центрам дополнительного профессионального образования и другим учреждениям, занимающимся профессиональным развитием педагогических кадров.

Структура и объем работы. Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. Общий объем работы составляет 126 страниц, 4 таблицы, 11 диаграмм, 12 графиков.

DURGARYAN ALESA MISAK

ONLINE PLATFORM AS AN EFFECTIVE MEANS OF TEACHER TRAINING PROCESS

Thesis submitted for the degree Candidate of Pedagogical Sciences, speciality 13.00.01 "THEORY AND HISTORY OF PEDAGOGY". The defense of the thesis will be held at HESC of RA 020 degree-awarding scientific council's session at Khachatur Abovian Armenian State Pedagogical University on December 4, at 12.00pm, Address: 0010 Yerevan, 17 Tigran Mets ave.

SUMMARY

Relevance of the study: In the current conditions of technological changes and pedagogical education, the education system is being modernized, especially in the field of teacher training, since the requirements for teachers are constantly changing. Today, a teacher must be sociable, constantly self-educate, be able to master and

apply innovative methods. Changes in the educational sphere provide for a revision of curricula and the use of various media tools, which allows the use of remote platforms where teachers are involved and participate in various seminars, webinars and courses. The online platform is rapidly stabilizing its position in the field of education, recording new successes. For online learning, it is necessary to be able to use media tools. The effectiveness of online training for teachers is determined by a number of factors such as personal interest, the introduction of theoretical approaches, and practice that allows applying theoretical knowledge in practice. Currently, pedagogy is undergoing the process of destroying existing stereotypes and forming a new paradigm of education. In this regard, there is a need for a new educational system that will train teachers who are successful in school and meet established educational standards. International experience shows that to achieve success in the field of education, it is important to have a high-quality teaching staff and content that meets the requirements of the time and stimulates students' desire to learn. In the Armenian educational environment, teacher training is presented as one of the main components of professional development, for which the Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia, organizations recommended by the Ministry for training personnel, and the National Center For Education Development and Innovation (NCEDI) are responsible. The issues of teacher training have been addressed in the works of Armenian and foreign figures from various fields of science (psychology, pedagogy, sociology, philosophy) (S. Khachatryan, K. Vardanyan, A. Manukyan, Z. Malkova, A. Barbariga, M. Andreyev, M. Hammersley, P. Robinson, etc.). However, the scope of our scientific research includes studying the effectiveness of training Armenian teachers in the Armenian reality on an online platform, which has not yet been fully scientifically studied. The process of teacher training in the educational system on the online platform faces difficulties: the organization of this process is associated with a number of problems that hinder the targeted and effective implementation of the course. Given a number of pedagogical factors and conditions, it is necessary to implement the process of professional and pedagogical training of teachers on the online platform using specially developed and organized tools.

The aim of the study is to develop a modular program using modern technologies for online teacher training and create a model for its implementation.

Research objectives

1. to study professional, pedagogical and methodological literature on this topic,

2. to study the current state of the online teacher training process and possible development trends,
3. to characterize the teacher training procedures on Armenian and international platforms based on the study and comparative analysis of international experience, to describe the features of the legislative field, the changes made to them,
4. to develop a modular program equipped with ICT tools and mechanisms to ensure the continuity of online teacher training based on the analysis of the results of the study.
5. to develop a "Pedagogical Model of Online Teacher Training".

Theoretical significance of the study. The modular program, the model that ensures its implementation and continuity, will enrich the theory of online teacher training processes. At the same time, the main issues, ideas, key positions and points of view related to the Armenian and international pedagogical psychological literature were considered, which are of theoretical significance for those conducting research in this area. A model has been developed that will improve the efficiency of the online learning process and ensure the continuity of online learning.

Practical significance of the study. The results of this study, as well as the "A Program for Using Modern Technologies to Organize Adult Learning" and "A Pedagogical Model for Teacher Training on an Online Platform" developed based on them, and their implementation can be used by various educational organizations implementing advanced training programs and short-term courses. The presented materials may also be useful for subject-specific methodological associations, centers for continuing professional education, and other institutions involved in the professional development of teaching staff.

Structure and scope of work. The work consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references and appendices. The total volume of the work is 126 pages, 4 tables, 11 diagrams, 12 graphs.